ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՄԱՄՈՒԼՈՒՄ
(1870-1890-ԱԿԱՆ ԹԹ.)

Է.00.01 – «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Խառատյան Ա. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Կարապետյան Ռ. Կ.

պատմական գիտությունների թեկնածու Մարգարյան Ն. Վ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. դեկտեմբերի 25-ին, ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. նոյեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հայկական հարցը Բեռլինի 1878 թ. վեհաժողովից հետո դարձավ միջազգային խնդիր և մեծ տերությունների քաղաքական նախասիրություններն օսմանյան կառավարությանը պարտադրելու հզոր կռվան: Օսմանյան կառավարությունն, ի դեմս սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի, մեծ քաղաքականության մեջ խուսանավելու և կայսրությունը կործանումից փրկելու ելքը տեսնում էր հայ ազգը ֆիզիկապես վերացնելու մեջ: Դա իրականացվում էր տերությունների կողմից սուլթանական կառավարության վրա գործադրվող ճնշումների սաստկացմանը զուգահեռ: 1894-1896 թթ. հայերի զանգվածային կոտորածները նրանցից ձերբազատվելուն ուղղված աբդուլհամիդյան քայլերի գագաթնակետը դարձան:

Ժամանակակից արաբական երկրների մեծ մասը XIX դարի վերջին քառորդին գտնվում էր օսմանյան տիրապետության ներքո: Արաբ ժողովուրդը նույնպես կրում էր օսմանյան բազմադարյա ծանր լուծը: Կայսրության ազգային-ազատագրական շարժումները սկսել էին ծավալվել նաև արաբական տարածքներում: Եգիպտոսում դրա համար խթան հանդիսացան այնտեղ ֆրանս-բրիտանական մրցակցության սաստկացումը և բրիտանական ներկայության ամրապնդումը: Օսմանյան արյունոտ քաղաքականությունն ուղղված էր նաև գլխատելու արաբական ազգային-ազատագրական շարժումները:

Եգիպտոսի՝ Արևմտյան Հայաստանի հետ միևնույն քաղաքական միավորի կազմում գտնվելը ենթադրում է հայությանն առնչվող պատմական իրադարձությունների լուսաբանման հավաստիություն և նվազ միջնորդավորվածություն:

Արաբական պարբերական մամուլի ծանրության կենտրոնը XIX դարի վերջին քառորդին Եգիպտոսն էր:

Սուլթանական ամենակուլ գրաքննության ու սրի սպառնալիքը սիրիական տարածքներից արաբ մտավորականության սերուցքն ուղղորդել էր Եգիպտոս, որտեղ բավականաչափ անկաշկանդ միջավայր էր ձևավորված խոսքի ազատության համար: Ըստ այմ՝ ակնհայտ է խնդրի առնչությամբ ժամանակի եգիպտական մամուլի հրապարակումների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այդ հրապարակումներն իրենց ուրույն տեղն են գրավում համաշխարհային պարբերական մամուլում Հայկական հարցի արտացոլման խճանկարում:

Ատենախոսության թեմայի արդիականությունը միտված է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և ցեղասպանության հետևանքների վերացմանն ու փոխհատուցմանը:

Հայոց ցեղասպանությունը սկիզբ առավ աբդուլհամիդյան կոտորածներով, իսկ Հայկական հարցն առ այսօր առկախ է: Թուրք-ադրբեջանական պատմագիտության մեջ պատմությունը նենգափոխելու արդի գործընթացների

պարագայում ողջամիտ է հայտնի պատմական իրողությունների առնչությամբ ներկայացնել նաև մեկ այլ ականատես ժողովրդի ընկալումը՝ խնդիրը դիտելով ոչ թե արևմտյան միսիոների կամ քաղաքական գործչի, այլ միևնույն կայսրության հպատակ այլ ժողովրդի աչքերով:

Արդի շրջանում հայ-եգիպտական միջպետական փոխհարաբերությունները թևակոխել են զարգացման որակական նոր շրջափուլ: Ժամանակի արաբական հասարակական մտքի խմորումների առանցքը հանդիսացող մամուլի գնահատականների անաչառ լուսաբանումն ու համակողմանի ուսումնասիրությունը ստանում են հիմնարար գործնական-կիրառական նշանակություն, կարևորվում նաև քաղաքական, պատմադիվանագիտական հրատապության տեսանկյունից:

Եգիպտոսն այսօր ընթանում է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու ուղեգծով: Դրա համար անհրաժեշտ պատմական հիմքն այդ երկիրը կարող է տեսնել իր իսկ մամուլի հրապարակումներում՝ ընդամենը ժամանակի սեփական լրատվամիջոցներում արձանագրված փաստերը վերընթերցելով ու մեկնաբանելով[1]: Բացի այդ, 1890-ականները Եգիպտոսի հայ համայնքի համալրման փուլերից է: Հայերը Եգիպտոսի ազգային փոքրամասնությունների շարքում մշտապես կարևոր տեղ են զբաղեցրել և, չնայած հայ համայնքի փոքրաթիվ լինելուն, այն միշտ եղել ու մնում է եգիպտական հասարակության անքակտելի մասը: XIX դարի երկրորդ կեսին մի շարք ղեկավար պաշտոններ գտնվում էին հայերի ձեռքին: Նուբար Նուբարյանը (Եգիպտոսի առաջին վարչապետը, մի քանի անգամ ստանձնել է այդ պաշտոնը՝ 1878-1879, 1884-1888, 1894-1895), Պողոս Նուբարյանը (Երկաթուղու վարչության ազգային ներկայացուցիչ՝ 1876-1879, 1891-1898), Հակոբ Արթինը (ընդհանուր կրթության նախարարի տեղակալ՝ 1884-1906), Տիգրան Աբրոյանը (արտաքին գործերի նախարար՝ 1891-1894) և այլք[2] ազդու լծակներ ունեին՝ չնայած նրանց նկատմամբ տեղացիների վերաբերմունքը միանշանակ չէր[3]:

Սույն ուսումնասիրության կարևորությունը հիմնավորելով՝ չմոռանանք, որ տվյալ ժամանակահատվածում Եգիպտոսում գրեթե չկային հայալեզու պարբերականներ. «Արմաւենին» սկսել էր լույս տեսնել 1865 թ. և դադարել

---

[1] Հայոց ցեղասպանության հիմնախնդիրն արդի փուլում նույնպես լուսաբանվում է բազմաթիվ եգիպտական լրատվամիջոցներում (տե՛ս http://www.el-balad.com/mobile/771091, http://www.el-balad.com/show.aspx?id=825936, http://www.ahram.org.eg/UI/Front/, http://arabi.ahram.org.eg/ErrorPage.aspx?aspxerrorpath=/NewsQ/37382.aspx,http://www.aztagarabic.com/archives/11969,http://www.elwatannews.com/news/details/399089,http://albedaiah.com/node/56478,http://m.almasryalyoum.com/news/details/484666,https://www.youtube.com/watch?v=oCU-vKiofxg&feature=youtu.be, http://ancnews.info/?p=1132 և այլն):

[2] **محمّد رفعة الإمام للأرمن في مصر، القرن التاسع عشر، القاهرة، 1995، ص 121-156.** **Պէրդրան Է.,** Նուպար փաշա 1825-1899, նիշք եւ տպաւորութիւնք, Կ. Պոլիս, 1910,

[3] Սա վառ արտահայտություն է գտել մեր կողմից ուսումնասիրված պարբերականներում, մի քանիսն առատ են նրան վատաբանող տողերով (տե՛ս "العروة الوثقى"، "الأهرام"):

ընդամենը 4 համար տպագրվելուց հետո: 1889 թ. նրան հաջորդեց «Նեղոսը»՝ հրատարակվելով միայն 18 ամիս: Եգիպտահայ մամուլի ակտիվացումը սկսվեց 1897 թ.՝ Գրիգոր Սարաֆյանի «Նոր կեանքի» և «Լրաբերի», այնուհետև՝ Հարություն Ալփիարի «Փարոսի» հիմնադրումով[4]: Հետևաբար, XIX դարի երկրորդ կեսին Եգիպտոսի ոչ միայն արաբ, այլև հայ ընթերցողի տեղեկատվության հիմնական աղբյուրն արաբալեզու մամուլն էր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է վերհանել և պատմաքննական լույսի ներքո ներկայացնել Եգիպտոսի արաբալեզու մամուլի հրապարակումները Հայկական հարցի վերաբերյալ: Ինչպես հայտնի է, Բեռլինի վեհաժողովից հետո Հայկական հարցը սկսել էր արծարծվել առավելապես բարենորոգումների ճանապարհով արևմտահայության դրությունը բարելավելու պահանջներով: Դրանց պատասխանը ճնշումներն առավել սաստկացնող օսմանյան քաղաքականությունն էր, որի գագաթնակետը դարձան 1894-1896 թթ. կոտորածները: Այս պատմական իրողությունների շուրջ էր պտտվում մեծ տերությունների և Օսմանյան կայսրության քաղաքական խաղը: Նպատակ ենք ունեցել ցույց տալու, թե ինչպիսի արտացոլում են գտել պատմական տվյալ իրողությունները ուսումնասիրվող մամուլում՝ այդ հիմնավորելով Եգիպտոսին հատուկ պատմական գործոնների համատեքստում: Նկատի ունենք, որ այդ արձագանքներն, ի վերջո, հող են նախապատրաստել մամուլում հայկական խնդրի ճշմարտացի կամ աղավաղված ներկայացման համար:

Ձեռնամուխ լինելով նյութի ուսումնասիրությանը՝ հետամուտ ենք եղել հետևյալ խնդիրներին.

- Ցույց տալ XIX դարի երկրորդ կեսի Եգիպտոսի արաբալեզու մամուլի զարգացման հիմնական առանձնահատկությունները և ուղղությունները՝ հիմնավորելով դրանց ձևավորման պատմական նախադրյալները:
- Բացահայտել Եգիպտոսի արաբալեզու մամուլում արևմտահայության կացությանն առնչվող հրապարակումները և վերհանել հիմնական շեշտադրումները:
- Վերհանել ու քննական լույսի ներքո վերլուծել ուսումնասիրվող մամուլում 1894-1896 թթ. հայերի կոտորածների և դրանց իրականացման ձևերի արձագանքները, անդրադառնալ հայ գաղթականների հիմնախնդրի լուսաբանմանը:
- Ուսումնասիրել Հայկական հարցի բովանդակության, Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրի, ինչպես նաև Հայկական հարցի վերաբերյալ մեծ տերությունների դիրքորոշման լուսաբանումը Եգիպտոսի արաբալեզու մամուլում:

---

[4] **Պայրամեան Ս. Ն.**, Հայ մամուլը Եգիպտոսի մէջ, մատենագիտական ցուցակ, Գահիրէ, 2005, էջ 2-10, **Թոփուզյան Հ.**, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Երևան, 1978, էջ 196-203:

• Վերլուծել խնդրո առարկա մամուլի հրապարակումները՝ համադրելով և համեմատելով ինչպես տարբեր ուղղվածության արաբալեզու պարբերականների, այնպես էլ ժամանակի միջազգային մամուլի, ականատեսների հուշագրությունների կամ տվյալ պատմական իրադարձություններին վերաբերող այլ աղբյուրագիտական արժեք ունեցող նյութերի հետ:

• Վերոհիշյալի միջոցով ուրվագծել Եգիպտոսի հանրության տարբեր շերտերի, դրանց հանրագումարում՝ նաև ընդհանուրի վերաբերմունքը Հայկական հարցի վերաբերյալ:

• Ցույց տալ մատուցված տեղեկատվության հակասությունները, բացահայտել դրանց պատճառները՝ պարզելու համար, թե որքանով է եգիպտական մամուլին հաջողվել պատմական իրականությունն արտացոլելու իր առաքելությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ: Ատենախոսությունը շարադրված է պատմահամեմատական, համադրական, վերլուծական մեթոդների զուգորդմամբ: Թեմայի համակողմանի և ամբողջական լուսաբանման տեսանկյունից կարևորվել է համալիր մոտեցումն ինչպես մամուլի և այլ սկզբնաղբյուրների, այնպես էլ հրապարակի վրա եղած պատմագիտական ուսումնասիրությունների նկատմամբ: Կարևորություն ենք տվել դրանց համակցությանը, որի միջոցով պատմական իրադարձություններն առավել հավաստի և անաչառ են ներկայանում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ատենախոսության ժամանակագրական սահմանների (1870-ականների երկրորդ կեսից մինչև 1890-ականների երկրորդ կեսը) սկիզբը համընկնում է մի կողմից՝ Հայկական հարցի միջազգայնացման, մյուս կողմից՝ Եգիպտոսում պարբերական մամուլի զարգացման մի կարևոր շրջափուլի՝ մասնավոր մամուլի սկզբնավորման հետ: 1897-ից Հայկական հարցը միջազգային ասպարեզում նվազ ուշադրության սկսեց արժանանալ: Եգիպտոսի քաղաքական պատմության մեջ նույնպես հասունացել էր նոր շրջան՝ ազգային-ազատագրական պայքարի սկզբնավորման փուլը, որը, խմորվելով 1880-1890-ականներին և ամրապնդվելով գաղափարական մակարդակում, պետք է մարմին առներ 1900-ականներին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ներկայացվող ատենախոսությունը Եգիպտոսի արաբալեզու մամուլում Հայկական հարցի, մասնավորաբար, Օսմանյան կայսրության կողմից արևմտահայության նկատմամբ իրականացված հայաջինջ քաղաքականության, ինչպես նաև Հայկական հարցում միջազգային դիվանագիտության դիրքորոշման վերաբերյալ խնդրո առարկա ժամանակահատվածում լույս տեսած նյութերի գիտաքննական վերլուծության առաջին փորձն է:

Բացի գիտականից, ատենախոսությունն ունի նաև ճանաչողական, կիրառական նշանակություն: Ատենախոսության մեկնաբանություններն ու

եզրահանգումները վերհանում են 19-րդ դարի վերջին քառորդին Արևմտահայ իրականության վերաբերյալ եգիպտական մամուլի արձագանքները: Ատենախոսության դրույթները կարող են օգտագործվել Հայկական հարցին, մասնավորապես 1894-1896 թթ. հայերի կոտորածներին, Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման խնդրին, Հայկական հարցում մեծ տերությունների և Օսմանյան կայսրության քաղաքականությանն առնչվող ուսումնասիրություններում, միտած են օժանդակելու Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի կողմից: Ուսումնասիրության կարևոր դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած վեց հոդվածներում և հանրապետական ու միջազգային գիտաժողովներում ընթերցած զեկուցումներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ): Ատենախոսության ատաղձը XIX դարի երկրորդ կեսին եգիպտական հասարակական միտքն արտացոլող մասնավոր մամուլի գլխավոր պարբերականներն են: Ընտրել ենք գաղափարական դաշտը ձևավորող՝ օսմանամետ, բրիտանամետ, չափավոր ազգայանական-իսլամական, երիտթուրքական-վտարանդիական հետևյալ օրաթերթերը՝ «Ալ-Ահրամ», «Ալ-Մուկատտամ», «Ալ-Մուայյադ», «Ալ-Մուշիր»[5]: Զուգահեռ օգտագործել ենք նաև դրանց հարող որոշ այլ պարբերականների հրապարակումներ[6]: Վերոնշյալներում տեղ գտած հոդվածները հիմք են հանդիսացել Եգիպտոսի հեղինակավոր գիտական պարբերականներ «Ալ-Հիլալ»-ի և «Ալ-Մուկթատաֆ»-ի՝ Հայկական հարցին վերաբերող հոդվածների համար: Փորձել ենք վերարտադրել եգիպտական հանրության մոտեցումները և վերհանել դրանց դրդապատճառները՝ համադրելով և վերլուծելով առկա նյութը:

Հայկական հարցը՝ որպես միջազգային քաղաքական քննարկման առարկա, իր հաստատուն տեղն է գրավել եգիպտական թերթերի առաջին էջերում: Խնդրի միջազգայնացման գրեթե տարեկիցը հանդիսացող «Ալ-Ահրամ»-ն ասվածի ցայտուն օրինակն է: Այն եգիպտական կարևորագույն պարբերականներից մեկն է (եթե ոչ ամենակարևորը) ցայսօր: Իր հիմնադրման օրից ի վեր թերթը կարողացել է խուսանավել Եգիպտոսում տեղի ունեցող քաղաքական փոփոխությունների ալիքներում՝ մի կողմից պահպանելու իր գոյությունը, մյուս կողմից՝ հանդես գալով չեզոք, ֆրանսիական, այնուհետև՝ 1882-ից նոր ծլարձակող եգիպտական ազգային շահերի դիրքերից: Ըստ այդմ էլ՝ թերթի

---

[5] ألأهرام" 1878-1897، "المقطّم" 1889 – 1897، "المؤيّد" 1890-1897، "المشير" 1895-1898، "الهلال" 1903-1915، "المقتطف" 1915.

[6] "العروة الوثقى" 1884، "مصر" 1896، "لسان العرب"، 1896.10.20، "الرأي العام" 1896.18.09. ē

լրատվության հայկական մասնաբաժինը կրում է Եգիպտոսի ազգային առաջնահերթությունների լույսի ներքո լուսաբանվելու յուրահատուկ կնիքը:

«Ալ-Ահրամ»-ին հակակշիռ պետք է դառնար բրիտանական քաղաքական շահախնդրությունների խոսնակ «Ալ-Մուկատտամ»-ը: Այդ երկուսին հակոտնյա և զուտ եգիպտական՝ հատկապես իսլամական, ազգային գաղափարների քարոզիչ «Ալ-Մուայյադ»-ը Եգիպտոսի հասարակական կարծիքը ձևավորող գլխավոր լրատուներից էր: XIX դարի երկրորդ կեսին առավելապես այս «երեքի» ամենօրյա լրատվությունն էր ձևավորում եգիպտական հանրային ընկալումը համաշխարհային իրականության նկատմամբ:

Կարևորել ենք նաև մեկ այլ՝ «նոր օսմանների» հիմնական հայեցակետերը զարգացնող երիտթուրքական-վտարանդիական մամուլի առկայության փաստը Եգիպտոսում, որի հրատարակություններից մեկը՝ «Ալ-Մուշիր»-ը, բավականաչափ հետաքրքիր վերաբերմունք է դրսևորել Հայկական խնդիրը մեկնաբանելիս: Ըստ այդմ, թերթը մեր կողմից մանրազնին հետազոտման առարկա է դարձել: Առանձնահատուկ ուշադրության ենք արժանացրել «Ալ-Մուշիր»-ի էջերում լույս տեսած բազմաթիվ ծաղրանկարները, որոնք անմիջական կապ ունեն Հայկական հարցի հետ և կոչված են լրացնելու ժամանակի միջազգային մամուլի սակավաթիվ օրգաններում խնդրին առնչվող ծաղրանկարների շարքը:

Ինչ վերաբերում է գիտական բնույթի պարբերականներում Հայկական հարցի քննությանը, ապա այս դեպքում ևս խնդիրն իր հաստատուն տեղն ունի ամենահեղինակավոր «Ալ-Հիլալ» և «Ալ-Մուկթատաֆ» գիտական հրատարակությունների հատորներում:

Շեշտադրել ենք այն հանգամանքը, որ մամուլում լրահոսն արծարծված է եգիպտական մտքի հասարակական տարբեր հոսանքների գաղափարական հետնախորքի վրա և կրում է դրանց առաջնահերթության դրոշմը: Այս վերջինը նյութի նկատմամբ մեր հետազոտական մոտեցման հիմնական առանցքն է:

Եգիպտոսի պարբերական մամուլի պատմական զարգացման առանձնահատկությունները, հասարակական մտքի գաղափարական ուղղությունները ներկայացնելու նպատակին հետամուտ՝ ուղղորդող արժեք ունեցող աշխատությունների շարքում ներառել ենք Ֆիլիպ Դի Տարազիի «Արաբական մամուլի պատմություն» երկհատոր հիմնարար ուսումնասիրությունը[7]:

Այս բնագավառում առաջին աշխատանքը պատկանում է 1884 թ. Կահիրեում Ֆրանսիայի հյուպատոսության թարգմանիչ Հենրի Գալիարդուի գրչին, որը ֆրանսերենով «Արաբական մամուլի պատմություն» խորագիրը կրող զեկուցագրում ներկայացրել է բոլոր այն պարբերականները, որոնք տպագրվում

[7] **الفيكنت فيليب دى طرّازي**، تاريخ الصحافة العربية، الجزء الأول والثاني، بيروت، 1913ة

էին Նեղոսի հովտում՝ ավելացնելով դրանց խմբագիրների կենսագրությունը, նրանց քաղաքական նախասիրությունները և գրական գործերը[8]:

Առաջին արաբ պատմաբանը, որն զբաղվել է արաբական մամուլի պատմությամբ, «Ալ-Հիլալ»-ի խմբագիր Ջիրջի Զեյդանն է: Նա ամսագրի առաջին համարում 1892 թ. հրատարակել է արաբական մամուլի առաջին համահավաք ցուցակը[9], որում ընդգրկված են աշխարհում մինչ այդ լույս տեսած 147 անուն արաբալեզու պարբերականներ՝ դրանց ուղղվածության, խմբագիրների, հրատարակության վայրի վերաբերյալ հավելյալ տեղեկատվությամբ: Հեղինակի գրչին է պատկանում ևս մի երկհատոր ծավալուն աշխատություն, որը մեզ մեծապես օգտակար է եղել[10]: Մեզ հաջողվել է գտնել մեկ այլ մատենագիտական ցանկ՝ «Ալ-Հիլալ»-ի հետագա համարներից մեկում, որի հեղինակը՝ Ասադ էֆենդի Սալիմը, համալրել է նախկինում արվածը՝ ավելացնելով 1892-1903 թթ. լույս տեսած արաբալեզու պարբերականների, դրանց հիմնադրման թվականի, վայրի, հիմնադիրների, ուղղվածության մասին ցանկը[11]: Այն լրացվել է նաև 1904 թ.՝ «Արաբական կենդանի պարբերականները» խորագրի ներքո[12]:

Ուշագրավ աշխատանք է արևելագետ Մարթին Հարթմանի՝ 1899 թ. անգլերենով հրատարակված «Եգիպտոսի արաբական մամուլը» ուսումնասիրությունը, որի հավելվածում ներկայացված է 168 անուն ամսագիր և թերթ՝ դրանց մանրամասն նկարագրությամբ: Հեղինակի դիպուկ բնութագրերը կարևորել ենք Եգիպտոսի արաբական մամուլի պատմության, պարբերականների ուղղվածության ոլորտում շրջանառող տեսական հիմնավորումները ձևակերպելիս[13]:

XIX դարի վերջին քառորդի եգիպտական մամուլի ներկայացման համար արժեքավոր աղբյուր է ծագումով թուրք, սակայն Կահիրեում մեծացած, արաբախոս և արաբական գրականության կարկառուն դեմքերից մեկի՝ Վալի ադ-Դին Յաքանի «Հայտնին և անհայտը» երկհատոր հուշագրությունը: Այն նախ և առաջ առանձնահատուկ է հայերի կոտորածների նկարագրություններով[14]:

---

[8] Զեկուցագրի երկու ձեռագիր տարբերակներից մեկը գտնվում է Փարիզում՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության արխիվում, իսկ մյուսը՝ Կահիրեում: Տարազին դրանց գոյությունը գնահատում է որպես արաբական մամուլի պատմության մեջ ֆրանսիական դերակատարության հաջորդ կարևոր քայլը՝ Նապոլեոն Բոնապարտի կողմից եգիպտական մամուլը հիմնադրելուց հետո (Նույն տեղում, էջ 21):

[9] "**الهلال**"، 1892، الجزء الأول، السنة الأولى، سبتمبر .

[10] **جرجي زيدان**، تراجم مشاهير الشرق في القرن التاسع عشر، ج. 1، 2.

[11] **أسعد افندي سليم**، الجرائد العربية في العالم، "الهلال"، السنة الثانة عشر، 1913، ص.49 .

[12] Նույն տեղում, թիվ 7, էջ 212:

[13] **Hartmann M.,** The Arabic Press of Egypt, London, 1899:

[14] Հեղինակը երիտթուրքական գաղափարախոսության կողմնակից էր և սուլթանի հրամանով աքսորվել էր Սեբաստիա, որտեղ և ականատե՛ս է եղել հայերի ջարդերին: Նա իր աշխատություններում բազմիցս դատապարտել է սուլթանի բռնապետական վարչակարգը՝ լինելով հակաաբդուլհամիդական:

Հեղինակը կարևոր անդրադարձեր է կատարել Եգիպտոսի արաբական մամուլի պատմությանը: Գնահատելի են հատկապես երիտթուրքական հրատարակություններին վերաբերող հատվածները[15]:

Ավելի ուշ շրջանի արաբալեզու ուսումնասիրություններից առանձնակի ուշադրության են արժանի Սամի Ազիզի[16], Աբդ ալ-Լատիֆ Համզայի[17], Իբրահիմ Աբդոյի[18], Ֆարուկ Աբու Զեյդի[19] Ռամզի Միխայիլի[20], Ահմադ Համրուշի[21] աշխատանքները:

Եվրոպացի ժամանակակից ուսումնասիրողներից կարևորել ենք Ա. Այալոնի ծավալուն մենագրությունը[22]:

Եգիպտոսի քաղաքական պատմության, պարբերական մամուլի ուղղությունների, հասարակական-քաղաքական հոսանքների ներկայացման նպատակով ուղղորդվել ենք մի շարք եվրոպացի և ռուս հետազոտողների աշխատություններով, որոնք օգնել են ճիշտ բնութագրել ժամանակաշրջանը և դրան հատուկ գաղափարական դաշտը[23]:

Ատենախոսության մեջ շոշափված հիմնահարցի շրջանակներում Օսմանյան կայսրության պատմությանը վերաբերող որոշ պատմական իրողություններ հիմնավորելիս օգտակար են եղել հատկապես Վ. Ա. Գորդլևսկու

---

[15] **ولي الدين يكن**، المعلوم والمجهول، الجزء الأول والثاني، مصر، 1909.

[16] **سامي عزيز**، الصحافة المصرية وموقفها من الأحتلال الانجليزي، القاهرة،.1968

[17] **عبد اللطيف همزة**، الصحافة العربية في مصر، دار الفكر العربية، 1985 ، عبد الطيف حمزة أدب ، المقالة الصحافية، ج. 4، علي يوسف.

[18] **إبراهيم عبده**، تطوّر الصحافة المصرية، 1898-1951 ، ابراهيم عبده، جريدة الأهرام – تاريخ مصر في 75 سنة

[19] **فاروق ابو زيد**، الصحافة المتخصّصة، القاهرة، .1986

[20] **رمزي ميخائيل**، الصحافة المصرية والحركة الوطنية من الاحتلال الى الاسقلال 1882-1922، القاهرة، .1996

[21] **أحمد حمروش**، قصّة الصحافة في مصر، القاهرة، .1989

[22] **Ayalon A.,** The Press in the Arab Middle East, New York, Oxford, 1995.

[23] **Նաջարյան Ե. Հ.,** Արաբական ազգային-մշակութային զարթոնքը, Երևան, 1988, **Կարապետյան Ռ.,** Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003, **Cromer,** Modern Egypt, vol. II, London, 1908, **Colvin A.,** The Making of Modern Egypt, London 1906, **Hunter R. F.,** Egypt under the Khedives, 1805-1879, from Houshold Government to the Modern Bureaucracy, Egypt, Gairo, 1999, **Armajani J.,** Modern Islamic movements, History, religion and politics, UK, 2012, **The Cambridge history of Egypt,** vol. 2, Modern Egypt from 1517 to the and of the twentieth century, Cambridge, 2008, **Ahmed J. M.,** The Intellectual Origins of Egyptian Nationalism, London, New York, Toronto, 1960, **Harris C.,** Nationalism and Revolution in Egypt, London, Paris, 1964, **Крачковский И.,** Мустафа - Кямиль и Жюльетта Адан, к истории национальной движении в Египте, Ленинград, 1928, **Долинина А. А.,** Очерки истории арабской литературы нового времени Египет и Сирия, просветительский роман 1870-1914 гг., Москва, 1973, **Котлов Л. Н.,** Становление национально-освободительного движения на Арабском Востоке, Москва 1975, **Левин З. И.,** Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и в Египте (Новое время), Москва, 1972, Ислам и национализм в странах Зарубежного Востока, Москва, 1988, **Луцкий В.Б.,** Новая история арабских стран, Москва 1965,

և Վ. Վ. Բարտոլդի աշխատությունները[24]: Մասնավորապես, նոր օսմանների, երիտթուրքերի գաղափարախոսությունների հիմնական կողմերի ներկայացման խնդրում առաջնորդվել ենք Յու. Պետրոսյանի և Ջ. Կիրակոսյանի աշխատություններով[25]:

Ատենախոսության համար առանցքային հարցերից մեկը՝ Օսմանյան կայսրության տպագիր մամուլի պատմությունը, լավագույնս ներկայացված է Ա. Դ. Ժելտյակովի մենագրության մեջ[26], որը մեծապես նպաստել է մեր աշխատանքի իրականացմանը:

Ատենախոսության հիմքը համարվող պարբերական մամուլը, ինչպես Օսմանյան կայսրության ամբողջ տպագրությունը, ենթակա էր աբդուլահամիդյան գրաքննության ազդեցությանը: Այն լուսաբանելու տեսանկյունից ուշագրավ են Ա. Խառատյանի մենագրությունները, որտեղ գրաքննությունը ներկայացվում է արևմտահայ մամուլի շրջանակներում, և որի զուգահեռները տեսնում ենք Եգիպտոսի արաբալեզու մամուլում[27]:

Ատենախոսության, թերևս, ամենակարևոր հիմնահարցը 1894-1896 թթ. հայերի կոտորածներն է, որն արաբ պատմագիտական միտքը գնահատել է որպես Հայոց ցեղասպանության սկիզբ:

Ն. Հովհաննիսյանն իր ուսումնասիրություններում մանրամասն քննության է առել այդ խնդիրը[28]: Հեղինակն իրավացի կերպով գնահատել է արաբական պատմագիտական մտքի վերաբերմունքը XIX դարի վերջին և **XX** դարասկզբին իրագործված հայերի կոտորածների և Հայկական հարցի վերաբերյալ՝ ընգծելով

---

[24] **Гордлевский В. А.,** Избранные сочинения III, Москва 1962, **Бартольд В. В.,** Сочинения, т. 6, Турция, ислам, христианство, Москва 1966

[25] **Կիրակոսյան Ջ. Ս.,** Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.), Երևան, 1980, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ.-1914 թ.), գիրք առաջին, Երևան, 1982, **Петросян Ю. А.,** Младотурецкое движение, Москва, 1971, նույնի՝ Османская империя, могущество и гибель, Москва 1990, նաև՝ Новые османы и борьба за Конституцию 1876 г. в Турции, Москва 1958, **Фадеева И. Л.,** Официальные доктрины в идеологии и политике Османской империи (Османизм-пантуркизм), Москва, 1985.

[26] **Желтяков А.Д.,** Печать в общественно-политической и культурной жизни Турции, Москва 1972.

[27] **Խառատյան Ա. Ա.,** Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը 1858-1896, Երևան, 1984, նույնի՝ Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Երևան, 1989:

[28] **Հովհաննիսյան Ն. Հ.,** Արաբական երկրների պատմություն h. 2, Օսմանյան տիրապետության շրջան. 1516-1918 թթ., Երևան, 2004, նույնի՝ Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004, նաև՝ Սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի հակահայկական քաղաքականությունն արաբական ժամանակակից պատմագրության գնահատմամբ, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1987, 1 (116), էջ 75-88:

հատկապես Լիբանանի և Սիրիայի պատմագետների՝ Մուսա Պրենսի[29], Սալիհ Զահր ադ-Դինի, Մրուան ալ-Մուդաուարի, Ֆուադ-Հաֆիզի և մի շարք այլ պատմաբանների աշխատությունները[30]:

Մասնավորեցնելով Եգիպտոսի սահմաններում՝ պետք է նշել, որ եգիպտական պատմագիտական միտքը Հայկական հարցին համեմատաբար քիչ է անդրադարձել՝ ի դեմս արդեն մեր կողմից հիշատակված Վալի ադ-Դին Յաքանի, ապա՝ Ֆայեզ ալ-Ղուսեյնի աղբյուրագիտական արժեք ունեցող աշխատանքների[31]: Առանձնահատուկ կարևորություն պետք է տալ հայտնի հայագետ Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամի հիմնավոր ուսումնասիրություններին[32]:

Նշենք, որ մեր ուսումնասիրության առարկա արաբալեզու պարբերականները ժամանակակից են 1894-1896 թթ. հայերի կոտորածներին, մինչդեռ պատմագիտական վերոբերյալ ուսումնասիրությունների հիմքում առավելապես ընկած են ավելի ուշ շրջանի հրատարակություններ: Մամուլում առկա Հայկական հարցին առնչվող՝ մեզ զբաղեցնող ժամանակահատվածով թվագրվող նյութն, այսուհանդերձ, վերոհիշյալ արաբ ուսումնասիրողների կողմից միայն նեղ սահմաններում է շրջանառվել, ուստի կարիք ունի ավելի լայն հետազոտության: Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամը հրատարակել է երկու ոչ ծավալուն սակայն չափազանց արժեքավոր ուսումնասիրություն, որոնք մեզ համար օգտակար են եղել ատենախոսությունը շարադրելու գործում[33]:

Եգիպտոսի արաբալեզու մամուլի արդյունավետ ուսումնասիրությանն էապես նպաստել են Ա. Կիրակոսյանի՝ Հայկական հարցի վերաբերյալ բրիտանական ու ամերիկյան կարևոր պարբերականների հրապարակումների քննությանը նվիրված աշխատությունները[34]: Ատենախոսության մեջ քննության դրված մյուս հիմնահարցերն ուսումնասիրելու տեսանկյունից չափազանց կարևոր են եղել Մ. Ներսիսյանի, Գ. Գալոյանի, Ռ. Սաֆրաստյանի, Վ. Պողոսյանի և այլ պատմաբանների աշխատությունները[35]:

---

[29] Moussa Prince, Un genocide impuni: lArmenocide, Beirut, 1975.

[30] مروان المدوّر، الأرمن عبر التاريخ، بيروت - لبنان، 1982، القاهرة - جيزة، 1997، صالح زهر الدين،سياسة الحكومة العثمانية في أرمينيا الغربية وموقف القوى الدولية منها، انطلياس 2010 .

[31] **عطا درغام، فايز** الغصين، شهادات عن مذابح الأرمن، http://www.ahewar.org/debat/show.art.asp?aid=435014

[32] **محمد رفعة الامام**، الأرمن في مصر في القرن التاسع عشر، مصر القاهرة، 1995، الأرمن في مصر 1896-1961، القاهرة 2003، ألقضية الارمنية في الدولة العثمانية 1878-1923، القاهرة 2002 ۞

[33] **محمد رفعة الأمام**، ألأهرام المصرية والقضية الأرمنية، 18978-1923، القاهرة 2006، القضية الأرمنية فى المصادر العربية 1923 – 1878, .http://www.ancme.net/studies/438

[34] **Киракосян А.,** Армянский вопрос на страницах журналов Великобритании (Середина 90-х гг. 19 века), Ереван, 1980, Киракосян А. Дж., Ближневосточный кризис 1895-97 гг., Армения и политика США, “Вопросы востоковедения”, Вып. 1-2, Ереван, 1983.

[35] **Ներսիսյան Մ.,** Պատմության կեղծարարները, հոդվածներ և հաղորդումներ, Երևան, 1998, **Գալոյան Գ.,** Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004,**Սաֆրաստյան Ռ.,**

Ատենախոսությանն առնչվող հարակից խնդիրները քննելիս օգտագործել ենք «Ատենագրութիւնք ազգային ժողովոյ» արձանագրությունները, այլ փաստաթղթերի ժողովածուներ[36], Սասունի, Զեյթունի իրադարձությունները ներկայացնող և հայ ազգային-ազատագրական շարժման պատմության վերաբերյալ մի շարք այլ հիմնարար ուսումնասիրություններ, հայ և այլազգի քաղաքական գործիչների, միսիոներների հուշագրություններ[37]:

Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, **Պողոսյան Վ.,** Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), Երևան, 2011, **Խուդինյան Գ.,** ՀՅ Դաշնակցության քննական պատմություն, ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը, Երևան 2006, **Բայբուրդյան Վ.,** Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008, **Եազըճեան Գ.,** Սուլթան Ապտիլ Համիտ Բ-ի Յուշերն ու մտածումները, Ապտիլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Պեյրութ, 1980:

36 Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1878-1880, Կ.Պոլիս, Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, Կ.Պոլիս, 1890-1896, **Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում** (1828-1923), պրոֆ Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, **Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում:** Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, 1991**, Լէօ,** Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, **Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան** (1873-1910 թթ.), գիրք Ը., կազմող և առաջաբանի հեղինակ Սանդրօ Բէհբուդեան, Երեւան, 2001, **Blue Book: Turkey.** No. 3. (Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey and Ivents in Constantinople). London, 1896, նաև՝ No. 1. (1890-1891) (Correspondence respecting the condition of the Populations in Asiatic Turkey and the prociidings in the Case of Moussa Bey). London, 1896, **Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году,** Москва, 1896, **Братская помощь пострадавшим в Турции армянам,** факсимильное воспроизведение издания 1898 года, Ер., 2014:

37 **Ա-Դօ,** Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները, Երեւան, 1912, **Ալպոյաճեան Ա.,** Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937, **Սարուխան,** Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում 1860-1910, Ա. Հատոր, Թիֆլիս, 1912, **Ատոմ (Հարություն Շահրիկյան),** Բարենորոգումներու հարցը, Կ. Պոլիս, 1914, **Աղասի,** Զէյթուն եւ իր շրջակաները, Պէյրութ, 1968, **Օտեան, Ե.,** Պօղոս փաշա Նուպար, Կ. Պոլիս, 1913, **Մարաշի Տէր Ղեւոնդ քահանայի Յուշերը,** կազմեց Վ. Տեր-Ղևոնդյանը, Երևան, 2013, **Մեյլան,** Սասուն, Երևան 1990, **Argyll J. D. (Duke of Argyll),** The Eastern question from the Treaty of Paris 1856 to the Treaty of Berlin 1878, and to the Second Afghan War, vol. 1, London,**Bliss Edwin Munsell**, Turkish cruelties upon the Armenian Christians, a reign of terror, 1896, **MacCol Malcolm**, M. A., England's responsibility towards Armenia, London and New York, 1895, նաև՝ The Sultan and The powers, London New York and Bombay, 1896, **Harris R. J. and Harris H. B.,** Letters from the Scenes of The Recent Massacres in Armenia, London, 1897, **Wintle W. J.,** Armenia and its Sorrows, London, 1896, **Sadik Shahid Bey**, Islam, Turkey, and Armenia, and how they happend, 1898, Edwin Pears, Life of Abdul Hamid, Capter XIV, Estimate of the Character of Abdul Hamid, London, 1917, Azhderian Antranig, The Turk and the Land of Հaig of Turkey and Armenia, New York, 1898.

Հայոց պատմության տվյալ ժամանակաշրջանը ներկայացնելու համար հիմք ենք ընդունել «Հայոց պատմության» ակադեմիական նոր հրատարակության երրորդ հատորի առաջին գիրքը[38]:

Ատենախոսությունը շարադրելիս թեմային առնչվող բազմաթիվ արժեքավոր նյութեր ենք քաղել համացանցային որոշ կայքերից[39]:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ներկայացվող ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից: Հավելվածում տեղ են գտել Եգիպտոսի «Ալ-Մուշիր» պարբերականի էջերում Հայկական հարցին առնչվող երգիծապատկերներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում է ընտրված թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու գործնական, կիրառական նշանակությունը, ներկայացվում օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ **«ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՄԱՄՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ: ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ», բաղկացած է երկու ենթագլխից:**

Առաջին ենթագլխում՝ «Հասարակական-քաղաքական իրականությունը և պարբերական մամուլը Եգիպտոսում XIX դարի վերջին քառորդին (համառոտ ակնարկ)», նախ՝ անդրադարձ է կատարվում 19-րդ դարի վերջին քառորդին Եգիպտոսում ընթացող հասարակական-քաղաքական հիմնական խմորումներին, գաղափարական մակարդակում դրանց արտացոլմանն ու ազդեցությանը: Հակիրճ ներկայացված է Եգիպտոսում արաբական լուսավորականության՝ «Նահդայի» առանձնահատկությունները, ապա՝ Եգիպտոսի պարբերական մամուլի հիմնադրման ու զարգացման պատմությունը: Վերոնշյալի համատեքստում տեղադրված է խնդրո առարկա մամուլի խճանկարը՝ ի դեմս բրիտանամետ, օսմանամետ, ազգայնական, երիտթուրքական ուղղվածության մամուլի, ինչպես նաև՝ գիտական պարբերականների:

Երկրորդ ենթագլխում՝ «Արևմտահայության դրության արտացոլումը», քննության են առնված Եգիպտոսի արաբալեզու մամուլի էջերում արևմտահայերին և Արևմտահայաստանի կացությանը տրված գնահատականները: Հայերին բնութագրելով որպես քաղաքակիրթ ազգ, իսկ Արևմտյան Հայաստանի ռազմավարական կարևոր դերակատարությունը

---

[38] **Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին** (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, 2010:

[39] http://zefys.staatsbibliothek-berlin.de/list/title/zdb/26687665/, www.al-mustafa.com.pdf, http://www.ancme.net/studies/438,http://dar.bibalex.org/webpages/mainpage.jsf?PID=DAFJob:186018&q, http://www.vostlit.info/Texts/rus/Jabarti2/frametext6.htm.

շեշտադրելով՝ խնդրո առարկա մամուլը, համաշխարհային մամուլին համաքայլ, արտացոլել է Արևմտյան Հայաստանում օսմանյան կառավարության ստեղծած անտանելի դրությունը՝ ընդգծելով, որ դա էր պատճառը, որ տերությունները սկսել են միջամտել կայսրության ներքին խնդիրներին և հայերին դրդել քայլեր կատարել՝ իրենց դրությունը բարելավելու նպատակով:

Երկրորդ գլուխը՝ **«ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ 1894-1896 ԹԹ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ»,** բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «1894-1896 թթ. կոտորածների քաղաքականության գնահատականը», ներկայացված է եգիպտական մամուլի էջերում տեղ գտած նյութը 1894-1896 թթ. հայերի կոտորածների մասին: Արևմտահայերի զանգվածային կոտորածները վերոհիշյալների կողմից որակվել են որպես «Ջարդեր», «Կոտորածներ», «Վայրագություններ», «Գազանություններ»: Մամուլում ընդգծված է դրանց իրականացման դիտավորյալ ու կանխամտածված լինելու հանգամանքը, հայերին օսմանյան բանակի և քրդական ջոկատների ձեռքով բնաջնջելու սուլթանական մտահղացումը: Կարևոր է կոտորածների իրականացման հարցում թուրքական կառավարության ու բանակի մասնակցության ընդգծումը: Դա հետագայում դրվելու էր կոտորածները որպես ցեղասպանության սկիզբ տարբերակելու հիմքում: Եգիպտական հանրությանը ներկայացվել է հայերի կոտորածների, դրանց ընթացքի, պատճառների ու հետևանքների՝ տվյալ ժամանակահատվածում հնարավոր ամբողջական վերապատկերումը:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայ գաղթականների հիմնախնդիրը», արտացոլված է 1894-1896 թթ. կոտորածների պատճառով դեպի աշխարհի տարբեր երկրներ և Եգիպտոս տեղափոխված հայությանն առնչվող լրատվության քննությանը: Հայտնի է, որ հայերի նկատմամբ օսմանյան իշխանությունների իրականացրած զանգվածային կոտորածների հետևանքով Արևմտյան Հայաստանից, Կ. Պոլսից և այլ թուրքական քաղաքներից հայերը հոծ խմբերով գաղթեցին աշխարհի տարբեր երկրներ: Հայության արտագաղթը Հայկական հարցի լուծման համիդյան քաղաքականության հիմնաքարերից էր: Արտագաղթին հնարավոր ծավալներ տալու ճիգը միտված էր փոխելու Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը: Եգիպտական մամուլն անդրադարձել է հայ գաղթականների թվաքանակին, Եգիպտոսում հայերին ցույց տրված հասարակության և պետության վերաբերմունքին:

Երրորդ գլուխը՝ **«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ»,** բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Հայկական հարցի արծարծումները», ցույց է տրվում որ Հայկական հարցը նշված ժամանակահատվածում եգիպտական մամուլի կողմից ընկալվում էր որպես բարենորոգումների խնդիր Արևմտյան Հայաստանում: Խնդրի էությունը վերհանելու մտայնությամբ՝ որոշ թերթեր

հետևողականորեն փորձել են լուսաբանել հայերի թվաքանակի վերաբերյալ օսմանյան պաշտոնական կեղծ վիճակագրական տվյալները:

Երկրորդ ենթագլխում՝ «Արևմտյան Հայաստանի բարեկարգումների խնդրի լուսաբանումը Հայկական հարց–Եգիպտական հարց զուգահեռներում», ներկայացված է Արևմտյան Հայաստանում բարեփոխումների իրականացման խնդրի քննությունը եգիպտական մամուլում: Այն դիտարկված է առավելապես հակաբրիտանական տեսանկյունից՝ կայսրության ամբողջ տարածքում բարեփոխումներ իրականացնելու տեսակետին համամիտ: Հիմնահարցն արտացոլվել է՝ անցնելով Եգիպտական հարցի կիզակետով, հստակ եզրագծելով Օսմանյան կայսրության նկատմամբ Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականության առանցքային շահերը և անուղղակիորեն շաղկապելով Եգիպտոսն Արևմտահայաստանին:

Երրորդ ենթագլխում՝ «Տերությունների դիքորոշումը Հայկական հարցում», Հայկական հարցում, ըստ ուսումնասիրվող մամուլի, ուրվագծված է Ռուսաստանի, Գերմանիայի, Իտալիայի վերաբերմունքը: Առանձնահատուկ գնահատականներ են տրվել բրիտանական քաղաքականությանը: Այն բոլոր ուղղվածությունների թերթերում արժանացել է խիստ, անկեղծ, դիպուկ բնութագրերի: Արժեքավոր են նաև Հայկական հարցում Ֆրանսիայի դիրքորոշումը ներկայացնող նյութերը:

Չորրորդ ենթագլխում՝ «Հայկական հարցն «Ալ-Մուշիր»-ի երգիծապատկերներում», վերլուծված են «Ալ-Մուշիր» թերթի բազմաթիվ համարների առաջին էջերում տեղ գտած երգիծապատկերները, որոնք խորհրդանշում են Օսմանյան կայսրության դրությունը և եվրոպական երկրներից նրա կախվածությունը: Դրանց շարքում մեծ տեղ են գրավում Հայկական հարցին վերաբերող երգիծապատկերները, որոնց հիմնական հերոսը միշտ սուլթանն է կամ օսմանյան պետությունը՝ եվրոպական դիվանագիտության ճնշումների տակ կքած, իսկ գլխավոր թեման՝ չարչրկված Հայկական հարցը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ի մի են բերվում ատենախոսության հիմնական արդյունքները.

19-րդ դարի վերջին քառորդին պատմական զարգացման յուրահատուկ փուլ թևակոխած Եգիպտոսի արաբալեզու մամուլը, գտնվելով խոսքի ազատությանը նպաստող համեմատաբար տանելի իրադրությունում, մեծ տեղ է հատկացրել հայկական հիմնախնդիրների լուսաբանությանը: Այդ է վկայում ինչպես եգիպտական տարբեր հասարակական հոսանքների խոսափող հանդիսացող լրատվական թերթերում, այնպես էլ գիտական հեղինակավոր հրատարակություններում խնդրին առնչվող պատկառելի նյութի առկայությունը:

- Եգիպտոսի արաբալեզու պարբերական մամուլը, մեկնարկելով Եգիպտոսի ազգային շահերի ելակետից, գործուն երկխոսության մեջ գտնվելով մի կողմից միջազգային պարբերական մամուլի, մյուս կողմից՝ օսմանյան

պաշտոնական մամուլի հետ, բազմաթիվ հրապարակումներում արտացոլել է Հայկական հարցը՝ XIX դարավերջի իր հիմնական զարգացումներով: Դրա վերաբերյալ արձանագրել է սեփական գնահատականները և իր ընթերցողին իրազեկել այդ մասին՝ խնդրի շուրջ ձևավորելով Եգիպտոսի հանրության կարծիքը:

• Խնդրո առարկա պարբերականները ժամանակի համաշխարհային մամուլի անքակտելի մասն են, և միանգամայն արդարացված է, որ դրանց էջերում տեղ գտած հրապարակումներն առավելապես շոշափել են միևնույն թեմատիկան, արտատպումներ կատարել, հղել կամ քննարկել ժամանակի ամերիկյան, եվրոպական, ռուսական հեղինակավոր թերթերի և լրատվական գործակալությունների կողմից արծարծված նյութերը: Թվարկվածների շարքում, հասկանալի դրդապատճառներով, գերակշռող են բրիտանական և օսմանյան պաշտոնական լրատվամիջոցները:

• Արևմտահայ իրականության իմացության աստիճանը եգիպտական հանրության շրջանում հնարավոր է հստակ վերարտադրել՝ ելնելով մամուլի էջերում հիմնախնդիրը ներկայացնող հասկացությունների և բովանդակային կաղապարների առատությունից: Այսպես. Եգիպտոսի ընթերցողի ունկին սովորական էին ու ինքնին հասկանալի իրողություններ «Հայկական հարցը», «Հայկական խնդիրը», «Հայերի դրությունը», «Հայերի կոտորածները», «Վայրագությունները Հայաստանում» «Հայկական դեպքերը», «Հայերը և Եվրոպան», «Հայկական ճգնաժամը» և արևմտահայ իրականությունը բնորոշող բազմաթիվ այլ կապակցություններ: Դրանք ամենօրյա իրազեկման բաղկացուցիչներ էին, որ ձևավորում էին եգիպտացի ընթեցողի վերաբերմունքը հայկական իրողությունների հանդեպ՝ աշխարհընկալման, բովանդակային, զգայական, նաև՝ իմացական մակարդակներում:

• Արևտյան Հայաստանի դրությունը և արևմտահայությանը հուզող խնդիրները համապատասխան արձագանք են գտել Եգիպտոսի մամուլում՝ առավելապես ժամանակի իրականությունը բնութագրող հրապարակումներով: Առաջին հերթին ընդգծված են այնպիսի ճշմարտություններ, ինչպիսիք են Արևմտյան Հայաստանի՝ աշխարհագրական առումով Օսմանյան կայսրության համար ռազմավարական կարևորություն ունենալը և հայերի բարձր քաղաքակրթական մակարդակը, դրա կողքին՝ օսմանյան պետության հետադիմական բնույթը և քաղաքակրթական արժեքները մերժելու հանգամանքը:

• Արևմտյան Հայաստանի դրությունը ներկայացնող հրապարակումները մերկացրել են Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ իրականացվող ցեղասպանական քաղաքականության հետևյալ դրսևորումները. հայերի թվաքանակը դիտավորյալ նվազեցնելուն միտված քայլերը, վիճակագրական գործընթացներում դրա մտածված նվազ ներկայացնելը, քրդերին հայերի դեմ սադրելը, դաժան հարկային քաղաքականությունը, կրոնական խտրականությունը, հայերի իրավազրկությունը, սովը,

մտավորականության և հոգևոր դասի նկատմամբ հալածանքների սաստկացումը:

• Լայն մեկնաբանության է արժանացել Հայկական հարցի բովանդակային կողմի քննությունը: Այս ամենը հիմնականում արտացոլվել է պատմական ճշմարտությանը համապատասխան և անաչառ: Օսմանյան լրահոսի վրա հիմնվող պարբերականների վերաբերմունքը զգալի չափով տարբեր է, սակայն թուրքական հայտնի ձեռագիրն իսկույն թույլ է տալիս բնութագրելու հրապարակված նյութերի ծագումը: Սրա առկայությունն ինքնին նկատելի է դարձնում վերջինների և եգիպտական մամուլի այլ օրգանների միջև Հայկական հարցի վերաբերյալ առկա ընկալումների ու մեկնաբանությունների հակասությունները:

• 1894-1896 թթ. հայերի կոտորածների մասին միջազգային մամուլում տպագրվող կցկտուր հրապարակումների շարքը լրացնելու են կոչված դրանք լուսաբանող բազմաթիվ հոդվածները Եգիպտոսի արաբալեզու մամուլի էջերում: Այստեղ տեղ են գտել կոտորածների ամենադաժան նկարագրությունները: Արժեքավոր են հատկապես Սասունի, Ուրֆայի, Կ. Պոլսի կոտորածներին վերաբերող հրապարակումները՝ հիմնված ականատեսների նամակների, քաղաքական գործիչների, լրագրողների տեղեկատվության վրա:

• պարբերականներում ուրվագծված է հայ ազգային-ազատագրական շարժման զարգացման միտումները՝ հատկապես Զեյթունի ինքնապաշտպանության, Օսմանյան բանկի վրա կատարված հարձակման և Գում Գափուի ցույցի իրողություններով: Ընդ որում, երբ խոսքը գնում է հայերի նկատմամբ օսմանյան կառավարության ցեղասպան դիրքորոշման մասին, բազմաթիվ հոդվածներում շեշտադրված է այն հիմնական դրույթը, որ կայսրության վարած քաղաքական ուղղությունն է հանգեցրել հայերի շրջանում քաղաքական կուսակցությունների ձևավորմանը, ինչպես և այն, որ ստեղծված անելանելի իրավիճակն է հայերին դրդել՝ ապավինելու տերությունների աջակցությանը:

• Հայերի կոտորածների իրականացման հեղինակները խնդրո առարկա մամուլում անժխտելի կերպով համարվում են սուլթանը և օսմանյան կառավարությունը, իսկ կատարողը՝ օսմանյան կանոնավոր բանակը՝ օժանդակ համիդեական խմբերի և այլ խաժամուժի հետ: Շեշտադրված է կոտորածները դիտավորյալ կերպով, կանխամտածված իրականացնելու հանգամանքը:

• Արևմտյան Հայաստանում բարեփոխումների իրականացման խնդրի քննությունը հատուկ տեղ ունի խնդրո առարկա մամուլում: Դա պայմանավորված է հատկապես տվյալ շրջանում կայսրության կողմից առաջադրված ընդհանրական բարեփոխումների ծրագրի շահարկումով: Ձևավորվող ազգային գաղափարների պայմաններում նկատելի է արաբներին կայսրության մյուս ժողովուրդներից գերադասելու միտումը, իսկ բարեփոխումների իրականացումը նախընտրելի է համարվում կայսրության ամբողջ տարածքում: Այս միտքը շրջանառվել է ինչպես օսմանյան

լրատվությանը հետևող թերթերում, այնպես էլ Եգիպտոսի ազգայնական և երիտթուրքական թերթերում, քանի որ դրանք միաձայն կերպով դեմ էին միայն հայկական նահանգներում բարեփոխումների իրականացմանը:

• Մեծ տերությունների քաղաքականությունն Օսմանյան կայսրության նկատմամբ խնդրո առարկա թերթերի մշտական քննության նյութն է: Հասկանալի դրդապատճառներով Մեծ Բրիտանիայի քաղաքականությունն առաջնակարգ ոլորտ է համարվել և համապատասխան լուսաբանության արժանացել: Հայկական հարցի շահարկումը Բրիտանիայի հավերժական շահերի համար՝ մինչ նրա Եգիպտոսում հաստատվելը, այնուհետ՝ այնտեղ իր ներկայությունն ամրապնդելու նպատակով, լավագույնս ուրվագծված է եգիպտական մամուլում: Հստակ զուգահեռներ կան Հայկական հարցի և Եգիպտական հարցի միջև: Սրանով պայմանավորված՝ կտրուկ գնահատականներ են հնչում բրիտանական քաղաքականության նկատմամբ՝ այն մասնավորեցնելով նաև Հայկական հարցում: Այդ հետնախորքի վրա ընդգծված է Ռուսաստանի որոշիչ դերակատարությունը, կատարված են դիպուկ եզրահանգումներ՝ Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանմանը հետամուտ և Հայկական խնդրում տերությունների կեղծ քաղաքականության վերաբերյալ: Այս խնդրում Եգիպտոսի արաբալեզու պարբերականների գնահատականներն ունեն քննադատական ուղղվածություն:

• Կարևոր է ընդգծել, որ չնայած XIX դարավերջին Եգիպտոսում նոր էին ձևավորվում ազգայնական շարժումը, քաղաքական կուսակցությունները, այնուամենայնիվ, գաղափարական ոլորտում դրանք մի հայտնի չափով ազդեցություն ունեին եգիպտական հանրության վրա: Նշված իրողություններն ամրապնդելու առաքելությունը գլխավորապես դրված էր պարբերական հրատարակությունների ուսերին, ուստի, կարծում ենք՝ հնարավոր է անվերապահ կերպով փաստել, որ Եգիպտոսի ազգային շահը միավորող գործոն էր մամուլի գրեթե բոլոր օրգանների համար: Ստեղծված էր յուրահատուկ *ազգային* հայելի, որի միջով էր գնահատվում իրականությունը: Սա նկատելի է մամուլի գրեթե բոլոր հրատարակություններում: Հայկական հարցի նկատմամբ հետաքրքրությունը, դրա ընկալման և լուսաբանության առանձնահատկությունները նույնպես մեծապես կրում են նշվածի ազդեցությունը:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. 1894-1896 թթ. հայկական կոտորածների արձագանքները Եգիպտոսի «Ալ-Մուշիր» պարբերականում, Հայոց պատմության հարցեր, թիվ 12, Երևան, 2011, էջ 192-205:
2. Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրի լուսաբանումը եգիպտական «Ալ-Ահրամ» օրաթերթում 1894-1896 թվականներին, Հայոց պատմության հարցեր, թիվ 13, Երևան, 2012, էջ 128-141:
3. Եգիպտոսի «Ալ-Մուկատտամ» թերթի հրապարակումները հայերի կոտորածների և հայ գաղթականների մասին (1889-1896 թթ.), «Սփյուռքագիտություն» տարեգիրք, Երևան, 2013, էջ 97-112:
4. Եգիպտոսի «Ալ-Մուկատտամ» օրաթերթի հրապարակումները հայերի կոտորածների մասին 1889-1896 թթ., Հայաստանը և արաբական աշխարհը, պատմություն և արդի խնդիրներ, Երևան, 2014, էջ 123-139:
5. Եգիպտոսի արաբալեզու մամուլը արևմտահայերի կացության մասին (1878-1896), Լրաբեր հասարակական գիտությունների, N 2 (644) Երևան, 2015, էջ 196-209:
6. Հայկական հարցը Եգիպտոսի «Ալ-Մուշիր» պարբերականի երգիծանկարներում ԺԹ դարի վերջին քառորդին, Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հատոր ԼԵ, Պեյրութ, 2015, էջ 623-637:

ЕРАНОСЯН НАРИНЕ СТЕПАНОВНА

АРМЯНСКИЙ ВОПРОС В ЕГИПЕТСКОЙ АРАБОЯЗЫЧНОЙ ПРЕССЕ (1870-1890 ГГ.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 "История Армении"

Защита состоится 25-ого декабря 2015 г., в. 14^{00}, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при институте истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Армянский вопрос в 1878 году приобрел международное звучание, и стал основным инструментом в руках Великих держав по принуждению Османской империи к проведению реформ с целю улучшения положения армян империи. В ответ османское правительство ожесточило политику притеснения армян, в последствии приведшую к массовой резне 1894-1896 годов.

Центр тяжести арабской прессы, во второй половине 19 века, переместился из Сирии в Египет. Вследствии османской цензуры печати, беспредела и гонений, стержень арабской ителигенции переместилась в Египет, где присуствовала свобода слоа. Потому изуечние арабской прессы приобретает важное значение.

Диссертация состоит из предисловия, трех глав, заключения, библиографии и приложений, где приводятся карикатуры египетской газеты “Аль-Мушир”.

Глава 1. “Египетская пресса последней четверти 19 в., освещение положения Западного армянства”. В начале представлена картина общественно-политической среды и его отражение на идейном уровне, кратко изложены особенности арабской просветительности в Египте, а также история становления и развития египтеской периодической прессы.

В контексте вышеизложенного представлена мозаика разнонаправленности прессы: проосманской, пробританской, национально-исламской, младотурецкой и научной периодики.

Арабоязычная периодика Египта отмечала высокий уровень армянской культуры и стратегическое значение Западной Армении в контексте политики великих держав. В этих публикациях освещалась также антиармянская политика османского правительства, в частности: ужесточение налогов, гонения в отношении армянской интеллигенции и духовенства, провокационные действия османских властей, направленные на разжигание розни между османоподданными курдами и армянами.

В основном акценты поставлены на проявлениях абдулгамидской политики геноцида, а именно: налоговая палитика, голод, натравление курдов на армян, гонения на священослужителей, цензура печати и другие социальние притеснения.

Публикации арбояазычной перссы Египта приводят к заключению, что вышеуказнное стало основной причиной приводящей вмешательству сверхдержав во внутренние дела Османской империи.

Глава 2. “Отражение массовой резни армян 1894-1896 гг. и положении армянских беженцев”.

Массовая резня армян 1894-1896 гг. ими охарактеризовано как “погромы”, “резня”, “зверства”, “свирепства”. Подчеркнуто умышленность и запланированность их проведения с помощю османской армии и курдских отрядов, а также преступный умысел султана по истреблению армян.

Египетской общественности была представлена полная картина армянской резни, ход его проведения, его причины и последствия для армянского народа.

В последствии армяне большими потоками эмигрировали в разные страны мира. Депортация армян являлась одним из краеугольных камней абдулгамидовского решения армянского вопроса.

Глава 3. “Освещение политики великих держав в Армянском вопросе” показывает, что Армянский вопрос на той промежутке, египетской прессой интерпретировался как основная задача по проведению реформ в Западной Армении. В некоторых газетах последовательно освещались османские официальние фальшивые статистические данные о численности армянского населения.

На страницах египетской прессы были начертаны позиции России, Германии, Италии в остношении Армянского вопроса. Их внимание особо акцентировано на политике Британской империи. Политическая деяательность Великих держав в газетах удостоилась строгих, точных оценок. Также интересны публикации касающейся итерпретации политики Франции в Армянском вопросе.

В диссертации подробно изучены и анализированы карикатуры египетской газеты “Аль-Мущир”, которые отражают истинное состояние Османской империи и его зависимость от европейских держав. Болшое место в ряде карикатур занимет Армянский вопрос, где главными героями являются нагибающийся султан и правительсто Османской империи под натиском европейской дипломатии.

В заключительной части обобщены основные выводы и положения.

YERANOSYAN NARINE STEPAN

THE ARMENIAN QUESTION IN THE ARABIC-LANGUAGE PRESS OF EGYPT (1870-1890s)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01

The defense of the dissertation will be held on December 25, 2015, 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The internationalization of the Armenian Question in 1878 became a powerful argument for the European great powers to impose their political preferences to the Ottoman government. The Armenian Question was mostly related to the demands for reforms to improve the situation of the Western Armenians. They were met by an Ottoman forceful response in Ottoman policy, which reached its height with the Armenian massacres in 1894-1896. The political game of the great powers and the Ottoman Empire revolved around those historical events.

Egypt was the gravity center of the Arabic press in the second half of the nineteenth century. The threats of the Sultan's growing censorship and the sword directed the cream of Arab intelligentsia from the Syrian territories to Egypt, where there was a rather relaxed atmosphere for freedom of speech.

Egypt belonged to the same political unit, which entails truthfulness in the coverage of historical events and less intermediation. The study of Arabic periodicals, therefore, acquires importance in this context.

The first chapter - "The Egyptian periodical press in the last quarter of the nineteenth century. The coverage of the Western Armenian situation" - initially speaks about the main political ferments within Egypt in the last quarter of the nineteenth century and their reflection and impact on the ideological level. The features of "Nahda," the Arabic enlightenment in Egypt, are briefly described, followed by the history of the establishment and development of the press in Egypt. The mosaic of the press under study is presented within the aforementioned context, including those publications with pro-British, pro-Ottoman, nationalist, and Young Turk orientations, as well as academic journals. The evaluation of Western Armenians and the situation of Western Armenia in the Arabic-language media of Egypt are investigated in depth1.

The Egyptian media, along with the Western world, reflected the intolerable situation created by the Ottoman government in its description of the Western Armenians as a civilized nation, while emphasizing the important strategic role of Western Armenia. The Arabic-language press of Egypt underscored the practices of Abdul Hamid's extermination policy toward Armenians, such as the heavy tax policy, famine, provocations of Kurds against Armenians, persecutions against Armenian clergy, censorship, and other social restrictions. The media emphasized that the execution of this program became the cause

behind the intervention of the powers in the internal affairs of the Empire and the steps taken by the Armenians to improve their situation.

The second chapter, “The reflection of the 1894-1896 massacres of Western Armenians an Armenian refugees in the Arabic-language media of Egypt,” introduces the materials from the Egyptian media concerning the 1894-1896 massacres. The massive exterminations of Western Armenians were characterized as “pogroms,” “massacres" and “atrocities.” Their intentional and deliberate implementation was underscored, together with the Sultan's idea of killing the Armenians through the Ottoman Army and the Kurdish militias. The emphasis of the Egyptian on the participation of the Turkish government and army in the achievement of the extermination is particularly important. It would be the future basis to distinguish the nature of the massacres as genocide. At the time, the Egyptian readers were offered a picture of the Armenian massacres, their development, causes, and consequences as complete as it was possible.

After the massacres organized by Sultan Abdul Hamid, considerable groups of Armenians from Western Armenia, Constantinople, and other Turkish cities emigrated to different countries, including Egypt. The emigration of Armenians was one of the cornerstones of Hamid's policy to solve the Armenian Question. The efforts aimed at changing the demographics of Western Armenia included fostering emigration in the biggest possible numbers.

The Egyptian press referred to the number of refugees in Egypt, as well as the public and official attitude towards Armenians in Egypt.

The third chapter, “The examination of the policy of the great powers in the Armenian Question,” shows that the Egyptian press referred to the Armenian Question at this time as the issue of reforms in Western Armenia. Some newspapers consistently tried to shed light over the Ottoman false official statistics with the aim of uncovering the essential points of the issue.

The Egyptian media examined thoroughly the issue of reforms in Western Armenia. It was mainly observed through an anti-British point of view, as part of the position of widespread reforms throughout the British Empire. The issue was discussed through the prism of the Egyptian question, with a clear assessment of the key interests of Great Britain toward the Ottoman Empire, which implicitly linked Egypt with Western Armenia.

The British policy was particularly evaluated, and characterized with very frank and precise qualifiers in newspapers of all orientations. The materials related to the French position are also of value.

Many caricatures on the front pages of many issues of “al-Mushir,” which symbolized the state of the Ottoman Empire and its dependence on European countries, have been analyzed. They included many caricatures whose main hero was always either the Sultan or the Ottoman state, bent under the pressure of European diplomacy, with the well-worn Armenian Question as the main subject.

The main results and conclusions of the dissertation are summarized in the Conclusions.